ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«28» 11 2024 թ.
№ ՊՄԵՊ-ԳԿԳ-1739

«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ (ՀՎՀՀ 00456403)
ՀՀ ք.Երևան, Վարդանանց 112
Հեռ.(+374) 99 24 55 57
էլ. փոստի հասցե՝ rafojakh@gmail.com

ՀՀ պաշտպանության նախարարության և «Ռաֆ-Օջախ» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) միջև 12.03.2024թ. կնքված N ՓՆՄԱՊՁԲ-24-20/3-5 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում /Համաձայնագիր N 1, առ. 15.05.2024թ/ Ընկերությունը պետք է մատակարարեր 4 հատ ապրանք Համաձայնագրի կնքումից հետո՝ 2 հատը 120 օրվա և 2 հատը 180 օրվա ընթացքում: 2024 թվականի հոկտեմբերի 28-ին Ընկերության կողմից ապրանքները մատակարարվել են, սակայն չեն համապատասխանել Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի պայմաններին:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետը (մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում) ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. նոյեմբերի 28-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Ռաֆ-Օջախ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 3,200,000 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն) և 2,560,000 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն ինչպես նաև Պայմանագրի միակողմանի ամբողջությամբ լուծման արդյունքում ենթակա է գանձման պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 36,000,000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը՝ 108,000,000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Ելնելով վերոգրյալից տեղեկացնում եմ, եթե մինչև **2024թ. դեկտեմբերի 6-ը** ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **36,000,000** ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և **108,000,000** ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «Ռաֆ-Օջախ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև **2024թ. դեկտեմբերի 6-ը** ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2075 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարերը Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ